
**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ) ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՆՑՈՒՄՍՅՒՆ ՓՈԽԼՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ***

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

Կայուն ժողովրդավարական արժեքներ դեռևս չձևավորած, սակայն ժողովրդավարական զարգացման ուղին որդեգրած պետությունների համար առանցքային հարցերից մեկը պետական կառավարման ձևի ընտրության հիմնախնդիրն է: Ժամանակակից աշխարհում մի շարք պետություններ դեռևս շարունակում են պետական կառավարման լավագույն ձևի փնտրտուքները, դրանով պայմանավորված՝ այդ պետություններում առավել հաճախ են կատարվում պետական կառավարման ձևի «մոդեռնիզացմանն» ուղղված քայլեր կամ փորձեր:

Յուրաքանչյուր դեպքում պետական կառավարման ձևի ընտրությունը իրականում բարդ գործընթաց է: Պետությունների մի մասում պետական կառավարման ձևը զարգացել է ժամանակի ընթացքում՝ պատմական և քաղաքական տարբեր գործոնների ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ: Այդպիսի պետություններում պետական կառավարման ձևը արմատական փոփոխության գրեթե չի ենթարկվում, ինչի շնորհիվ այդ պետություններում ձևավորվել է բավականին կայուն և արդյունավետ գործող պետական կառավարման համակարգ: Մինչդեռ անցումային փուլում գտնվող պետություններում առավել հաճախ է տեղի ունենում պետական կառավարման ձևի փոփոխություն: Ընդ որում, որոշ պետություններում դա արմատական բնույթի է, այսինքն՝ պետական կառավարման գործող մի ինստիտուցիոնալ համակարգից անցում է կատարվում տրամագծորեն այլ համակարգի:

Անցումային փուլում գտնվող պետություններում պետական կառավարման ձևի ընտրությունը կամ փոփոխությունը հիմնականում պայմանավորված է որոշակի հանգամանքներով, որոշակի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որոնց հիմքում կարող են ընկած լինեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ կրող գործոններ և շահեր: Նշվածով պայմանավորված՝ անցումային փուլում գտնվող պետություններում երբեմն արհեստականորեն ներմուծվում են այլ պե-

* Աշխատանքը կատարված է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի **04 սեպտեմբերի 2018 թ. № 36-Ա/Ք** հրամանով հաստատված **18T-5E130** գիտական հետազոտական թեմայի շրջանակներում:

տություններում գործող պետական կառավարման ձևերը, որոնք երբեմն արմատավորվում և հաջողությամբ գործում են, իսկ երբեմն ձախողվում: Վերը նշված հիմնախնդիրը բնորոշ է նաև հետխորհրդային մի շարք պետությունների: Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետությունները հայտնվեցին այսպես կոչված «անորոշ» վիճակում, և որոշակի ժամանակ էր անհրաժեշտ կողմնորոշվելու, թե պետական կառավարման որ ձևը կարող է արդյունավետ գործել, և միևնույն ժամանակ լուծել գործող իշխանության առջև ծառայած քաղաքական խնդիրները: Հետխորհրդային պետությունների մեծ մասը ընտրեց կառավարման նախագահական կամ կիսանախագահական ձև, իսկ որոշ պետություններ՝ խորհրդարանական (Լատվիա, Մոլդովիա, Էստոնիա):

Սակայն ժամանակի ընթացում հետխորհրդային մի շարք պետություններում ի հայտ եկան որոշակի թեզեր, որոնք պետական կառավարման ձևի փոփոխության հիմք դարձան: Այդ պետություններում պետական կառավարման ձևի փոփոխությունը հիմնականում հիմնավորվում էր հանրապետության նախագահի ձեռքում պետական իշխանության կենտրոնացմամբ և պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների ու հավասարակշռման մեխանիզմների անկատարությամբ, որոնք հանգեցնում են գերնախագահական կառավարման մոդելի արմատավորման կամ դրա վտանգի: Որոշ հետխորհրդային պետություններ, հենց նշված հիմնավորումներով պայմանավորված, կառավարման ձևը արմատական փոփոխության ենթարկեցին. օրինակ՝ Հայաստանը, Ղրղզստանը, որոշ առանձնահատկություններով նաև Վրաստանը, անցում կատարեցին կառավարման խորհրդարանական ձևին, որը նորայթ է այդ պետությունների համար: Ի դեպ, հետխորհրդային պետություններից Ղազախստանում ևս ակտիվ քննարկումներ եղան կառավարման խորհրդարանական ձևին անցնելու հնարավորության վերաբերյալ:

Կառավարման խորհրդարանական ձևը առավելապես բնորոշ է Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի պետություններին, որտեղ կայուն ժողովրդավարական ինստիտուտները ձևավորվել են պատմական զարգացման ընթացքում (Բելգիա, Միացյալ Թագավորություն, Դանիա, Նորվեգիա, Շվեդիա), իսկ որոշ եվրոպական պետություններում պատլամենտական կառավարման ձևը հաստատվել է ռեժիմի փլուզման հետևանքով (Իտալիա, Գերմանիա, Ճապոնիան, Բուլղարիա): Կան նաև խորհրդարանական որոշ պետություններ, որտեղ կառավարման խորհրդարանական ձևը հաստատվել է սոցիալիզմի փլուզումից հետո (Լատվիա, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա, Մոլդովա, Էստոնիա), իսկ որոշ հետխորհրդային պետություններում՝ պետական կառավարման ձևի փոփոխության արդյունքում (Վրաստան, Ղրղզստան, Հայաստան): Կարող ենք արձանագրել, որ հետխորհրդային պետություններում գոր-

ծող կառավարման նշյալ ձևը, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, պակաս կայուն է, ժողովրդավարական արժեքները՝ թերգարգացած, հետևաբար՝ կառավարման խորհրդարանական ձևը գործում է ոչ այնքան արդյունավետ:

Ինչպես նշեցինք, հետխորհրդային որոշ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը, առավել բնորոշ է պետական կառավարման համակարգում «հաճախակի» փոփոխություններ կատարելը, որն ունի տարբեր դրդապատճառներ և դրան նպաստող քաղաքական ու իրավական նախադրյալներ՝ սկսած պետական կառավարման համակարգի բարեփոխման «արդար» մոլմաներից մինչև դրանց ներքո քողարկված սեփական իշխանության գոյապահպանության քաղաքական խնդրի կենսագործում:

2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան սահմանադրական փոփոխություններ, որոնցով կառավարման կիսանախագահական ձևից անցում կատարվեց խորհրդարանական ձևի: ՀՀ-ում կառավարման խորհրդարանական ձևին անցումը լայն առումով հիմնավորվում էր պետական կառավարման համակարգում առկա անհաղթահարելի խնդիրներով, որոնք պարունակում են սահմանադրական ճգնաժամերի առաջացման վտանգներ¹: Սահմանադրական փոփոխությունների նախագծի մշակման և սահմանադրական հանրաքվեի ժամանակաշրջանում հասարակական և քաղաքական կյանքում շարունակվում էին քննարկումները առ այն, թե ՀՀ-ում կառավարման ձևի առաջարկվող փոփոխությունը ինչ նպատակ է հետապնդում՝ պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում, թե՞ գործող իշխանության գոյապահպանության ապահովում: Այս հարցի մասին պրոֆեսոր Վ. Ստեփանյանը նշում է, որ «Թավշյա հեղափոխության» արդյունքում համընդհանուր ճանաչում ստացավ այն թեզը, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հիմնական և իրական նպատակը եղել է ոչ թե պետական կառավարման համակարգը կատարելագործելը, այլ գործող նախագահի իշխանությունը «հավերժացնելը»: Արդարության համար նշենք, որ տոտալիտար, ավտորիտար և անցումային ռեժիմ ունեցող պետություններին ընդհանուր առմամբ բնորոշ են այդպիսի մանիպուլյացիաները²: Այնուհետև պրոֆեսոր Վ. Ստեփանյանը նշում է, որ 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունները և դրան հաջորդած իրադարձությունները հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ-ում

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», մշակել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը, Եր., 2014: <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

² Տե՛ս **Степанян Ваге**, Особенности моделей формы государственного правления Армении, Уроки «Бархатной революции», LAP LAMBERT Academic Publishing, 2018, էջ 28:

կառավարման կիսանախագահական ձևից խորհրդարանական ձևին անցումը առավելապես պայմանավորված է եղել սահմանադրական փոփոխությունները իրականացնողների սուբյեկտիվ ձգտումներով, քան օբյեկտիվ գործոններով, քանզի այդ փոփոխությունների որոշ դրույթեր միտված էին գործընթացը նախաձեռնողների և գաղափարակիցների, սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամների անհատական շահերի կենսագործմանը: Սակայն ստացվեց յուրօրինակ «խաղ՝ գրոյական արդյունքով»: Մարդիկ, որոնց շահերով էին թելադրված սահմանադրական փոփոխությունները, ոչինչ չստացան³:

Տեսականորեն հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների իրավական կարգավորման նպատակը պետք է լինի հասարակության և պետության շահերի իրականացումը և պաշտպանությունը, բնակչության տարբեր շերտերի և խմբերի շահերը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ու համընդհանուր արժեքների պաշտպանության ապահովումը: Սակայն հետխորհրդային պետությունների մեծ մասի օրենսդրություններում (ոչ միայն ենթաօրենսդրական ակտեր, այլև օրենքներ, նույնիսկ Մահմանադրություն) արտահայտված են ոչ հասարակական նշանակության շահեր, այլ օբյեկտիվորեն այդ շահերին հակասող իշխող էլիտայի առանձին շահեր և նույնիսկ այդ էլիտայի ներկայացուցիչների նեղ անձնական շահեր⁴: Այս առումով տեղին է նշել Բ. Գեդդեսի այն դիտարկումը, ըստ որի՝ Մահմանադրության հեղինակները հետապնդում են իրենց շահերը, որոնք ամեն ինչից նախապատվելի են⁵:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում կառավարման խորհրդարանական ձևին անցնելու իրավական հիմնավորվածությանը, ապա կարող ենք արձանագրել, որ հնարավոր չէ համոզիչ հիմնավորել ՀՀ-ում կառավարման կիսանախագահական ձևի բացասական, միևնույն ժամանակ պառլամենտական կառավարման ձևի ակնհայտ առավելությունները, որոնցով պայմանավորված՝ պետք է իրականացվեին պետական իշխանության համակարգում այդպիսի արմատական փոփոխություններ⁶: Միևնույն ժամանակ, պետական կառավարման գործող համակարգում առկա թերությունները մատնանշելը դեռևս պետական կառավարման ձևի փոփոխության բավարար հիմք չէ, քանի որ պետական կառավարման յուրաքանչյուր ձև ունի իրեն բնորոշ դրական և բացասական հատկանիշներ և կարող է կիրառելի լինել կոնկրետ պետության պա-

³ Տե՛ս նույն տեղը, էջ 28-30:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս **Geddes B.** Initiations of New Democratic Institutions in Eastern Europe and Latin America // Institutional Design in New Democracies: Eastern Europe and Latin America / Ed. by A. Lijphart, C.H. Waisman. – Boulder, CO; Oxford: Westview Press, 1996, էջ 18:

⁶ Տե՛ս **Степанян Ваге**, նշվ. աշխ., էջ 30:

րագայում: Անհրաժեշտ է դիտարկել գործող կառավարման ձևին այլընտրանք համարվող կառավարման ձևի դրական և բացասական կողմերը ևս: Այս առումով տեղին է մեջբերել Գ. Սարդորիի այն դիտարկումը, ըստ որի՝ երբեմն արդարացիորեն քննադատվում է կառավարման այն համակարգը, որտեղ ապրում ենք, սակայն հաճախ սխալներ ենք թույլ տալիս դրան այլընտրանք սահմանելիս՝ դրանց երբեմն պատկերավոր առավելություններ բնութագրելով: Եթե կառավարման նախագահական ձևը ժխտվում է, դա չի նշանակում, որ դրա բացարձակապես հակառակը՝ խորհրդարանական համակարգը, օրինություն է⁷:

Կառավարման խորհրդարանական ձևը արդյունավետ կիրառվում է խորհրդարանական կառավարմամբ եվրոպական մի շարք պետություններում, սակայն դա դեռ բավարար երաշխիք չէ՝ հուսալու, որ այն կարող է արդյունավետ գործել նաև ՀՀ-ում: Թերևս այդ մտայնությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ-ում խորհրդարանական կառավարման ձևին անցնելուց հետո էլ հասարակական և քաղաքական շրջանակներում շարունակվում են քննարկումները այն մասին, թե արդյոք կառավարման խորհրդարանական ձևին անցումը լուծել է կամ լուծում է քաղաքական համակարգի գերանձնավորվածության ու գերկենտրոնացվածության, գործադիր իշխանության համակարգում գործառույթների ու լիազորությունների հստակ սահմանազատման, Ազգային ժողովի քաղաքական դերակատարության բարձրացման, հանրային վստահություն վայելող արդարադատական համակարգի անկախության երաշխավորման և նմանատիպ առանցքային կարևորություն ունեցող հարցերը, որոնք վեր են հանվել Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում⁸:

Հասարակական և քաղաքական դաշտում առկա վերը նշված մտահոգությունը գոյության իրավունք ունի և հիմնավոր է թվում հատկապես այն համատեքստում, որ ՀՀ-ում տեղի ունեցած 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների իրականացման առանցքային հարցերի շրջանակը նույնպես շոշափվում էր վերը նշված խնդիրների լուծման համատեքստում: Մակայն, ինչպես ցույց տվեց իրականությունը և արձանագրվեց 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով, նշված խնդիրները 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով լայն առումով չհաջողվեց լուծել, և, համաձայն Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի, այդ խնդիրների լուծման նպատակով սահմանադրական նոր փոփոխությո-

⁷ Տե՛ս **Sartori G.** Neither Presidentialism nor Parliamentarism // The Failure of Presidential Democracy / Ed. by J.J. Linz, A. Valenzuela. – Baltimore, MD: Johns Hopkins Univ. Press, 1994. – V. 1: Comparative Perspectives, էջ 115:

⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 6-10:

յունների իրականացնելու անհրաժեշտություն առաջացավ: Կարծում ենք, որ վերը նշվածը բավարար հիմք է պնդելու, որ խորհրդարանական կառավարման ձևին անցումը ինքնին դեռևս բավարար երաշխիք չէ զարգացնելու այն պնդումը, որ Հայաստանի Հանրապետությունում լուծվել է կամ լուծվելու է պետական իշխանության առջև ծառայած և Մահմանադրական բարեփոխումների հայեցակարգում վեր հանված խնդիրները:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում կառավարման խորհրդարանական ձևին անցումը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգ է բերել կառավարման տվյալ ձևին բնորոշ մի շարք հիմնախնդիրներ: Ակնհայտ է, որ կառավարման խորհրդարանական ձևին անցնելը առաջացրել է պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի «միատեղման» և «կենտրոնացման» իրական վտանգ: Ընդ որում՝ Մահմանադրական բարեփոխումների հայեցակարգում ևս նշվել է, որ կառավարման խորհրդարանական մոդելին անցնելով դեռևս չի հաղթահարվում պետական իշխանության գերանձնավորման հնարավորությունը՝ սուբյեկտիվիզմի տարաբնույթ դրսևորումներով հանդերձ: Դա իր հերթին դառնում է իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման արգելակ⁹:

Կառավարման խորհրդարանական ձևը կարող է արդյունավետ գործել այն պետություններում, որտեղ առկա է զարգացած և կայուն քաղաքական համակարգ: Արդարության համար նշենք, որ հետխորհրդային պետություններում քաղաքական և կուսակցական համակարգերը անհրաժեշտ չափով կայուն չեն: Այդ հանգամանքը տեսական հարթությունում տարբեր տեսանկյուններից դարձել է քննարկման և քննադատության առարկա, և մի շարք հեղինակներ գտնում են, որ դրանով պայմանավորված՝ հետխորհրդային պետություններում կառավարման խորհրդարանական ձևին անցումը վտանգավոր է: Մյսայես, Զ. Չոտանը նշում է, որ Դրոզդատանում պառլամենտական կառավարման ձևին անցումը եղել է վաղաժամ, քանի որ ձևավորված չի եղել քաղաքական էլիտա, ինչը բացասական ազդեցություն է ունենում պետական կառավարման համակարգի վրա, քանզի խորհրդարանական կառավարման համակարգին բնորոշ են անկայունությունը և քաղաքական ճգնաժամեր առաջացնելու հնարավորությունը¹⁰: Բ. Մուհամեդջանովը, քննարկելով Ղազախստանում կառավարման խորհրդարանական ձևին անցնելու հեռանկարները, նշում է, որ այն վտանգավոր է, քանի որ չկան ո՛չ քաղաքական և ո՛չ էլ իրավական հիմքեր՝ ազատական-ժողովրդավարական պառլամենտական ավանդույթներ, սոցիալ-տնտե-

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 9:

¹⁰ Տե՛ս **Чотаев З. Д.** Парламентская форма правления в Кыргызстане: проблемы и перспективы, Баку, 2012, էջ 40:

սական զարգացածության բավարար մակարդակ և այլն¹¹: Կ. Թյոբին նշում է, որ հետխորհրդային պետություններում կուսակցական համակարգը կայուն չէ, ինչը խոչընդոտում է կառավարման պառլամենտական ձևին անցնելը¹², իսկ Ա. Մեդուշևսկին նշում է, որ կառավարման խորհրդարանական ձևի դեպքում բարդանում է արագ որոշում ընդունելու հնարավորությունը, ինչը հետխորհրդային պետություններում կարող է հանգեցնել կառավարման ճգնաժամի¹³:

Նշված խնդիրը բնորոշ է նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ դեռևս բավարար չափով կայացած չեն քաղաքական համակարգի տարրերը, այդ թվում՝ կուսակցությունները և այլ քաղաքական միավորներ: Այս առումով կառավարման խորհրդարանական ձևը Հայաստանի Հանրապետությունում առաջին «ճաքերը» տվեց կառավարման այդ ձևին անցնելուց անմիջապես հետո, երբ Ազգային ժողովը հայտնվեց քաղաքական ճգնաժամում: Մասնավորապես, պառլամենտում մեծամասնություն ձևավորած քաղաքական ուժը ստիպված եղավ սպառնալի պետության բարձրագույն՝ վարչապետի պաշտոնում ընդդիմության ներկայացուցչի ընտրությունը, որի հետևանքով իշխող միասնական քաղաքական ուժը կորցրեց իր ազդեցությունը¹⁴: Ինչպես նշում է պրոֆեսոր Վ. Ստեփանյանը, «Թավշյա հեղափոխությամբ» պայմանավորված՝ ՀՀ-ում առաջացավ աննախադեպ իրավիճակ, երբ ստեղծվեց փոքրամասնության կառավարություն՝ պառլամենտական մեծամասնության առկայության պարագայում: Վերջինս իրեն հայտարարեց ընդդիմություն: Սակայն, միևնույն ժամանակ, իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչները շարունակում էին զբաղեցնել Ազգային ժողովի նախագահի և երկու տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովների մեծ մասի նախագահների պաշտոնները: Այդ պարագայում առաջացել էր վտանգավոր քաղաքական իրադրություն՝ անկայուն հավասարակշռությամբ, որը կարող է բնորոշվել որպես «երկիշխանություն»¹⁵:

Կառավարման խորհրդարանական ձևին անցում կատարելով՝ ՀՀ-ում չպետք է շրջանցվեին այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են, օրինակ, սահմանադրական և քաղաքական համակարգի կայացածության աստիճանը, Ազգային ժողովի որպես պետության օրենսդիր և բարձրագույն ներկայացուցչական մարմնի ցածր հեղինակությունը և պառլամենտարիզմի հիմնարար տարրերի բավարար չափով արմա-

¹¹ St' u **Мухамеджанов Б. А.** Форма правления Республики Казахстан: конституционная модель и практика государственного управления. Дисс... д.ю.н., М., 2007:

¹² St' u **Tuori K.** Constitutional Design and the Choice of the Political Regime // *Armenian Journal of Political Science*. 2015, № 2, էջ 11:

¹³ St' u **Медушевский А. Н.** Сравнительное конституционное право и политические институты. М.: ГУ ВШЭ, 2002, էջ 274:

¹⁴ St' u **Степанян Ваге**, նշվ. աշխ., էջ 27:

¹⁵ St' u նույն տեղը, էջ 28:

տավորված չլինելը: Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Գ. Դանիելյանը, փաստացի պատերազմական վիճակում գտնվող երկրի պարագայում էական նշանակություն է տրվում անվտանգության ու պաշտպանունակության գործոնին: Հետևաբար, կառավարման առավել ժողովրդավարական ու ճկուն համակարգ նախատեսող խորհրդարանական կառավարման ձևը, այնուամենայնիվ, կարող էր նախընտրելի համարվել միայն երկու սկզբունքային նախապայմանների դեպքում: Այն պետք է ուղեկցվեր պետության պաշտպանության հուսալի կառավարման համակարգի ներդրմամբ: Բացի այդ՝ հարկ էր հանրային քննարկումներով միանշանակ վստահ լինել, որ ուրվագծվելու է կառավարման այդ ձևի նկատմամբ նախապատվություն տալու հասարակական-քաղաքական գերակայող դիրքորոշում¹⁶:

Վերը նշվածի համատեքստում հարկ է նշել, որ ցանկացած պետությունում, այդ թվում նաև ՀՀ-ում, պետական կառավարման ձևի արդյունավետության տեսանկյունից առանցքային է սահմանադրական կայունության ապահովումը: Դա պետությունում սահմանադրականության ամրապնդման և զարգացման նախապայմաններից է, որը ենթադրում է սահմանադրական ձևավորված արժեքների շարունակական զարգացման միջոցով Սահմանադրության կայունության ամրապնդում և ժամանակի մեջ գործունեության դինամիկայի ապահովում: Այս համատեքստում պետական կառավարման համակարգում տեղի ունեցող հաճախակի և արմատական փոփոխությունները, եթե նույնիսկ իրականում միտված լինեն պետական կառավարման համակարգում բարեփոխումների իրականացմանը, այդուհանդերձ գործնականում խաթարում են պետությունում ձևավորված սահմանադրական կայունության ամրապնդումը և զարգացումը: ՀՀ-ում պետական կառավարման ձևը, սահմանադրական փոփոխություններով պայմանավորված, անցել է զարգացման մի քանի հաջորդական փուլ, ընդ որում՝ յուրաքանչյուր փուլին անցնելը ենթադրել է պետական կառավարման ձևի փոփոխություն: Այսպես, 1990-1991 թթ. ՀՀ-ում գործում էր խորհրդային մոդել՝ որոշ առանձնահատկություններով, 1991-1995 թթ.՝ նախագահական մոդել՝ նույնպես որոշ առանձնահատկություններով, 1995-2005 թթ.՝ կիսանախագահական կառավարման նախագահական-խորհրդարանական մոդել էր, 2005-2015 թթ.՝ կիսանախագահական կառավարման խորհրդարանական-նախագահական մոդել, իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով անցում կատարվեց խորհրդարանական մոդելի:

ՀՀ-ում պետական կառավարման ձևերի փոփոխությունը, որքան էլ միտված է եղել պետական իշխանության կազմակերպման ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը, այդուհանդերձ գործնականում չի

¹⁶ <http://ysu.am/news/hy/Comments-on-the-parliamentary-form-of-governance>

նպաստել սահմանադրական ձևավորված արժեքների ամրապնդմանը, քանի որ յուրաքանչյուր դեպքում կառավարման ձևի փոփոխությունը ենթադրել է պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում, գործառույթների վերաբաշխում, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև գործող զսպումների և հավասարակշռման նոր մեխանիզմների ամրագրում, որոնց «հարմարվելու» և արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է որոշակի տևական ժամանակ՝ պետական իշխանության մարմինների միջև զսպումների, հավասարակշռման և փոխյրացումների մեխանիզմների ներդաշնակ գործարկման համար:

Ամփոփելով նշենք, որ անցումային փուլում գտնվող մի շարք պետությունների բնորոշ են պետական կառավարման լավագույն ձևի փնտրտուքներ, ուստի այդ պետություններում առավել հաճախ են տեղի ունենում պետական կառավարման ձևի «արդիականացմանն» ուղղված քայլեր կամ այդպիսի փորձեր, որոնց հիմքում ընկած են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ դրդապատճառներ՝ պետական կառավարման համակարգի բարեփոխման «արդար» մղումներից սկսած մինչև պետական կառավարման համակարգի բարեփոխման «արդար» մղումների ներքո քողարկված սեփական իշխանության գոյապահպանության քաղաքական խնդրի լուծումը: Դրանով հանդերձ՝ կարող ենք արձանագրել, որ պետական կառավարման համակարգում տեղի ունեցող համակարգային և «հաճախակի» փոփոխությունները, որքան էլ իրականում միտված լինեն պետական կառավարման համակարգի կատարելագործմանը, այդուհանդերձ գործնականում խաթարում են պետական կառավարման մարմինների գործունեության կայունության ամրապնդումն ու զարգացումը:

Բանալի բառեր – կառավարման ձև, անցումային պետություններ, խորհրդարանական կառավարում, սահմանադրական կայունություն, «Թավշյա հեղափոխություն»

АЙК КЕСОЯН – Проблема выбора (изменения) формы государственного управления в странах, находящихся на переходном этапе. – В статье выявляются причины, побуждающие изменить форму государственного управления и способствующие им политические и правовые предпосылки. В результате отмечается, что в странах, находящихся на переходном этапе, выбор или изменение формы государственного управления в основном обусловлены конкретными обстоятельствами, необходимостью решить конкретные задачи, в основе которых лежат как объективные, так и субъективные мотивы.

Ключевые слова: форма управления, переходные страны, парламентское управление, конституционная стабильность, «бархатная революция»

HAYK KESOYAN – The Problem of Choice (Change) of the Form of Government in Transition Countries. – The article deals with the problem of the choice (change) of the form of government in transition states. The reasons of changing

the form of public government in other countries, as well as their political and legal backgrounds have been revealed. The study shows that the choice or change in the form of government in transition countries is largely driven by specific circumstances, the need to solve specific problems, which may be based on both objective and subjective motives.

Key words: Form of government, transitional states, parliamentary governance, constitutional stability, Velvet revolution

Ներկայացվել է՝ 09.12. 2019,
Գրախոսվել է՝ 11. 12. 2019,
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020